

# ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՐԿ ԿԸ ՎՃԱՐԵՑՈՒԹՅՈՒՆ

Մեր պատմութեան մէջ զարմանալի երկոյթներէն մէկն ալ է հարկատուութեան խնդիրը, Փոքր ժողովուրդ մը եղած ենց ինչպէս հիմայ նաև զին ժամանակ, և հարկատուութեան զարափարը միզի այնչափ ընտանի եղած է դարաւոր վարժութեամբ՝ որ մեր այս վարժութեան սխալ ըլլալը հաստատելու համար պէտք ենց օտարներու վկայութեան դիմել, որոնք, ինչպէս մեր պատմութեան շատ մը կէտերուն վրայ՝ նոյնպէս նաև հոս անշաւ հասիրութեամբ խօսելով, Կ'ըսեն թէ Հայերս Հայովմայեցոց հարկ չէինք վճարեր, թէկ մեր հայկական աւանդութիւնը միշտ հակառակը պնդած է:

Եթէ քաղաքական պատմութեան մէջ կարելի է հաշտեցնել կամ նոյնացնել արտաքիններու և մեր մատենազրաց ըսածները, հոս հարկատուութեան ինդուրյն մէջ անոնք իրարու տրամադօրէն հակոտնեայ ըլլալ կը տեսնուին:

Մենց երկու կողմերն ալ համառուիւ խօսեցնել տալին առաջ կ'ուզենք ուշադիր ընել ընթերցողը այն կէտին վրայ, թէ Խորենացոյ տեղեկութիւնը հոս իրը ընդհանուր ազգային աւանդութիւն մը կը նկատենք, առանց ընդունելու անոր ընծայած թագաւորաց ցանկին նշողութիւնը:

Արդ, ազգային աւանդութիւնը կը խօսի Խորենացոյ բերնով և ըստ այսմ Հայոց հարկատուութիւնն առ Հոռվմայեցիս կը սկսի Արշամայ ժամանակ, որ հայկական Միջազգեցէն և կեսարիա-Մաֆաքայ կողմերէն մասնական հարկ կը ստիպուի վճարել։ Իսկ սորս որդույ Արգարու ատեն

րովանդակ՝ Հայաստան հարկատու կ'ըլլայ Հոռվմայեցոց, Օգոստոս կայսեր աշխարհազրին ժամանակ<sup>1</sup>։ Այս գէպքէն իրը 50 տարի վերջ Հայոց թագաւորն Երուանդ ոչ միայն «հարկս առաւելազոյնս տայրի Հայոց» այլ նաև կը բռնադատուի Միջազգետը թողուլ Հոռվմայեցոց<sup>2</sup>։ Այսկայն Արտաշէս թիգախ թագաւոր մ'է. նա բանի տեղ չդներ Հոռվմայեցոց իշխանութիւնը, և հետեւարար փոյթ ալ չըներ հարկը հոգալ, բայց երբ կայսեր հարկահանները ծանր սպայիւց Հայոց սահմանները կը մտնեն, կ'աճապարէ Արտաշէս կը կրկին հատուցանել հարկերը և կը բարեկամացնէ իրեն զՀոռվմայեցիս։ Այսկայն խորամանք ու քաջ Հայը Գոմեսիանու (== Գոմեսիս կորրուպոնի) զօրաց վրայ Բասենոյ հովտին մէջ մեծ յաղթութիւն մը տանելով զարձեալ քանի մը տարի Կ'ընդհատէ հարկը, բայց երբ յիտոյ Տրայիան պետութեան ահազին ուժերով Արեւելք կ'արշաւէ, նաև Արտաշէս կը փութայ անոր ընզառաջ մեծամեծ ընծայներով և չփնարուած հարկերով, և հազիր կրնայ թողութիւն գտնել ցասուցեալ կայսերէն։ Այսուհետեւ անսայթաք տարուէ տարի կը վճարէ թէ Տրայիանու և թէ Ադրիանու ժամանակ<sup>3</sup>։

Ուրեմն այսպէս Օգոստոսէն (30 ն. Ք. — 14 յ. Ք.) սկսեալ մինչեւ Ադրիան (117-138) ամբողջ մէկ ու կէս զար հարկ վճարած ենց Հոռվմայեցոց և անշուշաԱդրիանէն վերջն ալ շարունակուեր է այդ։

Այսչափը արդէն բաւական կը համարինք ազգային աւանդութիւնէն որ դեռ կը շարունակուի ։ Ինչ Կ'ըսեն արտաքինք։

Նախ, ոչ մէկ վկայութիւն ծանօթ է մեռքի որ այս բանս հաստատէ։ Ծնդհակառակն Տակիսոս Հայոց ի վաղուց հետէ Հոռվմայեցոց հարկ տալ սովորութիւն չունենալը արդէն ծանօթ բան Կ'ենթազրէ։ Երբ իրը 65ին յ. Ք. կորրուպոն չէր ու-

1. Խոր. Բ. 24.  
2. Անդ 26.

3. Անդ 88.  
4. Անդ 48, 54, 55.

զեր անձամբ Պարթևաց հետ զարնուիլ Հայաստանի համար և ուրիշ յատուկ զօրագար մ'ուզեց Հռովմէն, կայսեր և ծերակոյսի որոշողութիւնն ինկաւ կ. Պետոսի վրայ: Արդ Տակիտոս այս պոռոտախօս ու պարձենկոտ Հռովմայեցւոյն, որ զերորուզոն և անոր ըրածները ոչինչ կը համարէր, հետեւել սպառնալից խօսքերը արտասանել կու տայ. «Ես հարկ, ԵՇԻՎԱ, պիտի զնեմ և օրէնքներ (Հայոց վրայ) և փոխանակ թագաւորի ստուերին՝ Հռովմէական իրաւունքը պիտի հաստատեմ պարտելոց վրայ<sup>1</sup>»:

Տրայիան իիրակի Արեւելքի մէջ հարկերու և մարսերու օրինաց նկատմամբ փոփոխութիւններ մտուց<sup>2</sup>, և Սպարտիան կ'ըսէ թէ Կայսրն Աղրիանոս «Միջագետացիներէն հարկը չպահանջեց զոր զրած էր Տրայիան<sup>3</sup>: Բայց Տրայիանու մանաւանդ Հայոց նկատմամբ ըրած որոշողութիւնները բնաւ տեսողութիւն չունեցան:

Երկրորդ դարու վերջերէն պատմիչ մը, Ապահանոս Աղեցասնդրացի, որ յոյն լեզուով Հռովմայեցւոց պատմութիւն մը ունի, իւր գործին թառաջարանին մէջ համառու տեսութիւն մ'ընկերով Հռովմէական տէրութեան այդ ժամանակի մէջ ունեցած զիրքին և դրացի ազգաց նկատմամբ գերիշխանութեան վրայ, առ խօսքերը կը գրէ Հայոց նկատմամբ. «Մեծ Հայը, թէ Հռովմայեցւոց պազեցութեամբ թագաւոր կ'ընդունին, բայց հարկ, գծը չ, չեն վրճարեր<sup>4</sup>»:

Սպահանոս այս յոյժ բացայատ խօսքերը կարծէր աւելի հաստատութիւն մը կ'առնուն անով, որ Ստրարն, Աղ դարու մէջ շատ վստահելի Յոյն աշխարհագիր և պատմագիտ մը, Յգոստոսի ժամանակները

Հռովմէական պետութեան ազդեցութեան վրայ նոյնպէս համառու բովանդակութիւն մ'ընկերով, կը թուէ մի առ մի այն երկիրները, որոնց ուղղակի հռովմէական ազդեցութեան տակ ինկան և որոնց, ինչպէս այլուստ զիտենց, Հռովմայեցւոց հարկ կը վճարէին, այսպէս իզգպատոս, Ասորից, կապարզվէիա և Պոնտոս մասամբ. իսկ ասոնց իրը հակազդութիւն մը կը կազմեն Հայը, Վրացից և Աղուանք, որոնց, կ'ըսէ Ստրարոն, Հռովմայեցի զօրավարաց ներկայութեամբ չուտով կը նուաճուին, թէկ միւս կողմանէ ալ միշտ կ'ապստամբին, երբ տեսնեն որ Հռովմայեցից ուրիշ բանով մը զրայած են: Նոյնպէս Պարթէց կը պատկառին հռովմէական պետութենէ:

Աւրեմ Հայը, Պարթէր, Վիրը և Աղուանք մասնաւոր հարկ մը չէին վճարեր Հռովմայեցւոց ինչպէս միւսները, թէկ կը յարգէին անոնց զէնքերուն ոյժը:

Նոյնպէս զիտելու է որ Corpus inscr. lat. բազմանաւոր հրատարակութեան անվերջ ցանկերու մէջ, ուր նաև իւրացանչիւր աշխարհէ առնուած հարկը և հարկահանաց անունը նշանակուած է, երբէց չներ հանդիպիր Հայաստանի անուան իրը հարկ վճարող երկիր մը:

Դարձեալ նկատի առնելու է նաեւ այն հանգամանքը որ Հայը Հռովմայեցւոց սոսկ բարեկամ ժողովուրդ մ'էին<sup>5</sup> և ոչթէ հռովմէական նահանգ, Թողոնց որ այդ բռնադատ բարեկամութիւնն ալ տաղտկալի էր Հայոց և արթը չէին փափցըներ զայն եւս գլխերնէն ննտել: Խակ Տրայիանու զէայաստան նահանգ հռչակելը և Հայոց Միջագետացւոց հետ ապստամբին և ազատութիւն ձեռք ճգիլն այնչափ կարճ ժամանակի մէջ կատարուեցաւ, որ

1. Տակիտոս, Տրայիր. ԺԵ, 6.

2. Fronto, էջ 321: Այս խնդիրներու վրայ բաւական լրաց պիտի սփոք անուզաւ Արքիմէէր Լազարանէ հրատարակուած ուսւակուած «Պալմիր» գիրքն, յուրօք յունարէն խոշոր արձանագրութիւնն մը մէջ Տրայիանու որոշողութիւնները նկարագրուած են: Դրազդարար մնաց զիրութիւնը չունից այս ականեմական շաբաթ

digitised by

զիրը մեր արածադրութեան տակ ունենալու և հոս զորանակել կարենալու:

3. Սպարտիան «Աղրան» էջ 178:

4. Ապահան, Յառաջարան:

5. Կիկերոն Յ. Սեբաստայ, ԽԵ, 59: — Դիոն Կաստու 1.9. 50:

Հոռվմայեցից և ոչ իսկ ատեն կը նային  
ունենալ հարկի վրայ մտածելու։

Ընդհակառակն Գ. դարու վատահելի  
պատմիչ մը, Դիրոն կասսիոս, իւր ժամա-  
նակի դէպքերուն վրայ խօսելով կ'աւան-  
դէ մեզ, թէ կարակալլա (211-217) կայս-  
րը տարուէ տարի վրամ կը վճարէր Հա-  
յոց թագաւորին, — որոյ անունը զժբաղ-  
դաբար մեզի հասած չէ, թէ շատ քաջ  
անձ մ'ըլլալը կը տեսնուի պատմութե-  
նէն, և նորա որդին և յաջորդը Տըր-  
դատ Բ (217 - ?) կը յուսաք նոյն դրամն  
ընդունիլ Մակրինոսէ<sup>1</sup>։

Հոս չեմ ուզեր մանրամասնութեանց  
իշխնել ըսելու համար թէ Արշամ և Ար-  
գար անուամբ երբէք թագաւոր ունեցած  
չենք Հայերո, և հետեւարար առողուց տուած  
հարկն ալ Հայոց հետ այնչափ կապ ու-  
նեցած է որչափ իրենց իշխանութիւնը :  
Անոնց գրաւելիք ժամանակին մէջ արդէն  
յատուկ թագաւորներ ունէինք Հայերս,  
որոց անուանց Օգոստոսի Անկիւրիոյ ար-  
ձանագրութեամբ և Տակիսոսի պէս հզօր  
պատմագրով վաւերացած են և մենք պէտք  
չունինք Միջագետի անապատներուն մէջ  
Հայ թագաւորներ որոնելու<sup>2</sup>։

Արդ, մի անգամ և շեշտուի հոս, որ  
հեթանոս Հայաստանի վիճակը այնքան  
վատ չէր, որչափ մենք զայն քաղաքա-  
կան դէպքերու և զէնքի շառաչներու տը-  
պաւորութեան տակ յաճախ կ'երկակա-  
յենք: Տիրաւի թագաւորնիս Տիգրան Մե-  
ծէն (95-65 Ն. Ք.) վերջ տարարաց ազդե-  
ցութեամբ կ'ընդունէնք, բայց կար հոն

1. Դիրոն ՀԲ. 27. Այս հանգամանքները դեռ թէ մը  
մութ են մեզի համար, թէ Մարգրար (Բ ZDMG, 1895  
էջ 649) կը համարի թէ արդ զամաց փատրինաթիւն  
մը եղած ըլլայ այս երկիրներու համար, զորս Հայոց  
թագաւորն ի կապաղովիս զրաւած էր և զոր Հոռվ-  
մայութիւնից անկէ ետ առնելով տեղը զրամական փախարի-  
նութիւն մը կ'ընդէնք։

Եթէ այդպէս է, այն առեն Տրդատ ինչո՞ւ զրամ ևս  
կը յօսայ, յես երկիրները Հոռվմայերին երկրորդ  
անթը առած ըլլալու, ինչպէս որ Կ'ըսէ Դիրոն բնա-  
գերու։

2. Տես Օգոստոսի ինքնակնազրութիւնը, որ է Մո-  
նումենտալ Անցրական յոյն և լատին լեզուով,  
Տակիսոս Տարերեց Բ. 3, 4, 56, 58, 64, 68, Դաւել  
Դիրոն, Սուենոն. Վէլլէրո Պատերկուլու և Ցովէզուու։

դեռ հզօր ժողովուրդ մը և նախարարա-  
կանութիւնը, որոնց գիտէին իրենց երկրին  
ներքին շահերը զէնցով պաշտպանել։

Սակայն պիտի հարցուի, թէ ինչո՞ւ այն  
ատեն հոռվմէական լեզուուները Հայաստա-  
նի համար արին կը թափէին։

Այսոր պատասխանը ուրիշ առթիւ։

Հ. Յ. Ասունեաւ



## ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ

### Ի ՍԿԶԲԱՆԷ ՄԻՆՉ

#### ՅԱՐԵԱԿՈՒՆԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆ

Սարիկուրիս Ա, 828ին իր աթոռոն Տուս-  
պա (Ցուպ = Վան) կը փոխազդէ, ամ-  
բութեանն համար, ու զայն անապիկ վի-  
ճակի կը վերածէ<sup>1</sup>, ինքզինցն արքայից  
արքայ, թիանայի բագաւոր և Նախրիի իշ-  
խան կը հռչակէ: Իննուէն գրիշներ բե-  
րել տարով՝ Ասորեստանեայց վեհապետ-  
ներու նման, ու անոնց պարեննկոտ ո-  
ճովն իր գործերն արձանագրել կու տայ  
ապառաժից վրայ, անոնց սեպաձև գրե-  
րով ու լեզուու<sup>2</sup>: Սարիկուրիսի յաջորդ-  
ներն այլևս ինքզինցնին թիանայի թա-  
գաւոր, Տուսպասի մայրացազարին տէր  
կը հռչակեն. սակայն Ասորեստանեայց  
միշտ Արքարտուի թագաւոր կը կոշէն զա-  
նեցնը։

Սարիկուրիսի յաջորդ Խշրուխնիս Ա.ի  
օրով Ասորեստանեայց Շամսի-Ռիաման Դ.  
արքայն (825-812) երիցս կ'արշաւէ  
Նախրիի վրայ, առաջինն անձամբ, երկ-

1. Ասորեստանեայց երբէք չեն կոցած Տուս-  
պա մոնելի։

2. Արձանագրութիւններւն երկու տաս-  
նօթ են մենք։